2641/1

ՀԱՄԱՌՕՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԼՈՅՍՈՎ ՅՈՒԴԱՅԱԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, ՄՈՀԱՄԵԴԱԿԱՆ ԵՒ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ԽԱՒԱՐԻ ՓԱՐԱՏԻՉ

ԿԱՄ

# Ս Ի Ւ Ր Մ Ա Յ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԿՈՒՐՈՒ-ԹԵԱՆ ԴԷՄ ՅՈՒԴԱՅԵԱՆ-ՆԵՐԻՆ ԵՒ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻՆ

Այս Աստուածային ամենաթանկագին գրքոյկը թարգմանուած է Թուրքերէն բնագրից.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1918 թ.

2

1 OCT 2009

ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԼՈՅՍՈՎ ՅՈՒԴԱՅԱԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԵՒ
ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆ ԽԱՒԱՐԻ ՓԱՐԱՏԻՉ

ԿԱՄ

# ՍԻՒՐՄԱՅ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԿՈՒՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՑՈՒԳԱՅԵՌՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻՆ

*«Իմ սիւրմայով օծիր քո աչքերը, որպէսզի դու տեսնես. որովհետև դու կոյր ես, ասում է այժմ Նախայայտնութեան անմահ մարդ Եհովան իւրաքանչիւր վեհապետի, մանդարինի, արիստօկրատի, փիլիսոփայի, աստուածաբանի և Սատանայի ձեռքով խաւարած այս աշխարհի Թալմուդականի»:* Գ. Ե. 3—18:

*Գ. Ե. նշանակում է Գիրք Երկնից, որը Եհովան ուղարկեց իր հրեշտակի հետ* 11 *տարի առաջ նախ քան Երուսաղէմի աւերելը, որպէսզի Նոր-կտակարանական* 144,000 *հրէաներն ու Նրա հեթանոսներից հաւատարիմ ծառաներն իմանան՝ ինչ վայել է լինել* 2000 *տարուայ ընթաց-*

31 MAY 2013

264/1



քում։ Այսինքն՝ ցոյց տալ նրանց՝ թէ ինչպիսի դժոխային քրիստոնէութիւններ, յուդայականութիւններ և մահմեդականութիւններ է հնարում Սատանան և ինչով կը վերջանայ Նրա վերջին կամ արմակեդոնական ճակատամարտը Սատանայի և սատանայական քրիստոնեաների դէմ։ Գ. Ե. 16—16։ 19—11...21. Եզ. 38 և 39։

Գ. Ե. յունարէն ապոկալիպսիս։

1884.

Այս գրքոյկի հրատարակութեան պատճառը.

Ով ունի լսող ականջներ, նա թող լսի հասկանալի լեզուով աստուածային հետևեալ մարգարէութիւնները.

„Ահա խաւարը կը պատի ամբողջ աշխարհը և կը կուրանան բոլոր ազգերը, իսկ քեզ վրայ Երուսաղէմ, կ'երևայ יהוה և Նրա փառքը կը փայլի քեզ վրայ, և հեթանոսները կը սկսեն ման գալ քո լոյսի մէջ, և նրանց թագաւորները՝ քո ճաճանչափայլ լոյսի մէջ։ Իսկ այս նշանակում է, որ բոլոր այժմեան թագաւորները, ազգերն ու ցեղերը գտնւում են կորստաբեր մոլորութեան կամ խաւարի մէջ։ Այսինքն՝ բոլոր դժոխային—վիճաբանող կամ խռովարկու հաւատները, ինչպէս են՝ 666 քրիստոնէական, 7 յուդայական և 8 միաստուածեան մահմեդական,



և 333 բազմաստուածեան հաւատները. հնարւած են խռովարկու Սատանայի ձեռքով և ոչ թէ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԵՀՈՎԱՅԻ։1) Եւ այս ժամանակ արևելքից2) եկողին Նա կը առաջացնէ հիւսիսում,3) և Նա կը յայտարարի բոլոր ազգերին Իմ Անունը4) և ՀԱՆՐԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ.5) բայց կը յայտարարի այնպէս (զարմանալի), որ ոչ ոք չի լսի6) ոչ Նրա հրապարակային քարոզը և ոչ էլ փողոցում Նրա կոտրած ճիպոտի ճայթիւնը։ Այսինքն՝ հէնց այս մարդուն ԵՍ դարձրի լոյս հեթանոսների7) համար և դաշն (յուդայական) ազգի համար հեթանոսների հետ հաւատի միութեան համար, որպէսզի արևելքից մինչև արևմուտք փառաբա-

1) Ես 60—2, 3: Գ. Ե. 16—10: 17—22։ 18—3, 23, 24: 19—2։ 13—8։ 2 Տիմ. 3—1...8:

2) Ուրալից, Բարանչից:

3) Օրինակ՝ Սոլովէցկի կղզու վրայ:

4) יהוה (Եհովա), 2 Մ. 6—1. 3։ 15—3։ Ովս. 12—6։ Գ. Ե. 22—6, 16։

5) Կամ հաւատի միութիւն ամբողջ աշխարհի համար, Եփ. 4—13։

6) Այսինքն՝ սեղաններն էլ տաճարում չի ջարդի, խարազանով առևտուր անողներին չի հարւածի և 2000 խոզեր աղքատներից չի խլի։

7) Այսինքն ոչ հրէաների։

նեն Իմ Անունը և հեթանոսները, և ամեն տեղ նրանք երկրպագեն, խնկարկեն և անարատ զոհեր մատուցանեն Իմ Անվանը, և որպեսզի Իմ Տաճարը Նոր Սիոնի սարի վրայ լինի ընդհանուր աղօթելու տաճար արդէն բոլոր ազգերի համար։ Ես. 41—25։ 42— 6...1։ 46—11։ 56—7։ 2—2...4։ Մաղ. 1—11։ Սաղ. 67 (66)—6։ Եզ. 40-ից մինչև 48։ Մար. 11—17։ Գ. Ե. 15—4։ 11—1, 2։ (Եփ. 4—13)։

Եւ այսպէս

Իմ Աստծու Այս հրամանը կատարելու համար՝ ես ուղարկում եմ Նրա այս կենսատու լոյսը հրեաների մօտ, նրանց մէջ մահաբեր խաւարը ոչնչացնելու համար, և որպեսզի նրանց միջոցով փայլի այս լոյսը և ամբողջ այս մութ աշխարհի վրայ։

Եւ այս պատճառով

Աստուածների Աստծու անունով, որի յաւիտենական Անունն է եբրայեցերէն יהוה։ 1) խընդրում եմ քրիստոնիաներին՝ բոլոր նրանց 666 դժոխային խաւարկու քրիստոնէութիւններին, և բոլոր մահմեդականներին ու բուդդայական-

1) 5 Մ. 10—17։ 2 Մ. 6—1...3։ 15—3։ Ովս. 12—6։ Գ. Ե. 22—16.



ներին, հաղորդել հրեաներին այս ուրախալի լոյսը նրանց Եհովայից, որքան կարելի է շուտ։

Ազդարարութիւն

Չը նայելով այս գրքոյկը փոքր է, բայց այնպէս թանկագին է բոլոր մահկանացու մարդկանց համար, որ նրա համեմատութեամբ ադամանդի սարերն էլ ոչինչ են. որովհետև Նա հաղորդում է այս անցաւոր աշխարհին այնպիսի կենսատու ճշմարտութիւն, որը եթէ մահկանացու մարդը գտնեղի իր սրտում, այն ժամանակ Նա կը դարձնի նրան անվերջ յաւիտեան մարմնաւոր անմահ մարդ։

Կամ

Սա մի այնպիսի անսպասելի նորութիւն է, որ յայտնում է՛ի զարմանս ոչ միայն ամբողջ մարդկային աշխարհին, այլ և հրեշտակներին և Իրան, Սատանային։ Հետևապէս՝ ով էլ որ չը լինիս դու, մահկանացու մարդ, թէկուզ թագաւոր, պապ, կամ բօդշեւիկ, Պէտք է կարդաս այս գրքոյկը մեծ ուշադրութեամբ և ակնածութեամբ, այսինքն՝ առանց ծխախոտային խընկարկութիւնների և շմարսեան-բուրմունքների, ապա թէ ոչ՝ աւելի լաւ՝ մի կարդա նրան, նախազգուշացնում եմ քեզ իմ մարդասիրութեամբ։

Իմաստնասէրը Բուդդայականներ կամ Զրադաշ-

տականներ1) կամ անհերքելի ճշմարտութիւն պարունակող մարդիկ, որ Աստուածների—Աստուած Եհովան2) այնպիսի մարդ է, ինչպէս և բոլոր աստուածները:3) Կարդացէք շուտով այս գըրքոյկը երկիւղածութեամբ ձեր բոլոր լեզուներով. որովհետև սա է հէնց այն ուրախալի աւետիքը՝ «Եհովայի տասներորդ յայտնութեան4) մասին այս մոլորակի վրայ (պատերազմները և մարդկանց մէջ5) ամեն տեսակ թշնամութիւն

---

1) Կամ գարօտատրականներ:

2) Կամ ձեր ասելով Բուդդան, կամ Զրադաշտը, որ ռուսերէն նշանակում է՝ մեր արեգակնային համակարգութեան Աստուածը, կամ կարճ՝ արևի Աստուածը, այսինքն՝ նա արևի մէջ է զետեղել իր բնակարանը: Սաղ. $^{19}_{18}$—5, բայց Սատանան սովորեցնում է. «Աստուած լոյս է» 1 Յով. 1—5:

3) Որ համաձայն և սխալ 1 Մ. 1—26, 27: 3—8...10, 22: 18—1...8, 20: 21—33: 19—1...27: 2 Մ. 15—3: 2 Խր (Մնաց.) 18—13...21: Ես. 6—1...5: Գ. Ե. 1—13...18: 3—20, 21: 22—6, 16: 19—11...14: Դան 7—13, 14:

4) Կամ ձեր ասելով մարմնանալու:

5) 9-րդ անգամ նա եկաւ աշխարհ միայն նրա համար, որպէսզի դառն բաժանում և թշնամութիւն գցի մարդկանց մէջ. Մատ. 10—34...36: 24: Ղուկ. 12—49...53: Գ. Ե. 12—12: 3—10: Ես. 60—2: 2 Տիմ. 3—1...8:



սերմանող բաժանումները1) ոչնչացնելու համար), որին դուք մինչև երկար, բայց անյողդողդ սպասում էք: Ես: 2-4: 11—6, 9, Միք. 4—3:

Օրհնած Իսմայէլի2) նշանաւոր շառաւիղներ կամ բոլոր ուղղափառ մահմեդականնե՛ր,

Կարդացէք շուտով այս գրքոյկը ակնածութեամբ ձեր բոլոր լեզուներով. որովհետև սա է հէնց այն ամեն ինչ խաղաղեցնող ճշմարտութիւնը, որին՝ «սպասել հիւսիսից» քարոզեց ձեզ Եհովան նրա սուրբ մարգարէ Մահմէտի միջոցով:

Փ. ա. Յուդայականնե՛ր, համալսարանական գիտութիւնների դասընթացն աւարտածնե՛ր կամ հանրամարդկային իմաստութեամբ մի քիչ մարդ դարձածնե՛ր, և հետևապէս հանրամարդկային մարդասիրութիւնից3) չը հեռացածնե՛ր:

## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ4)

Սովորելով հեթանոսական համալսարաններում՝ դուք ամուր կերպով համոզուեցիք, որ համալսարանական կամ հանրամարդկային իմաս-

---

1) Կամ անջրպետները:

2) 1 Մ. 17—20: 16—10: 25—16:

3) Հումանիտարութիւնից կամ մարդասիրութիւնից:

4) Խաղաղութիւն ձեզ:

ութիւնը պահանջում է և հանրամարդկային Կրօն. որովհետև այսպիսի Կրօն դեռ չկայ յայտնապէս այս մոլորակի վրայ, այդ պատճառով դուք հարկադրուած էք եղել լինիլ ոչ քրիստոնիաներ, ոչ յուդայականներ, ոչ մահմեդականներ և ոչ բուդդայականներ, կամ ձեր հրէականՆ1) Աստծու առաջ դուք եղաք ոչ սառը ոչ տաք դէպի ՆԱ․ կամ աւելի կարճ՝ ոչ այն, ոչ այս։ Իսկ յայտնի է ամբողջ աշխարհին, որ այսպիսի մեռած մարդկանց ընդհանրապէս ՆԱ սովորած կը լինի ժայթքել Իր ամենասուրբ շրթունքներից.2) բայց որովհետև Նա չի ցանկանում Նրա նմաններից ոչ ոքի չըքանալը գոյութիւնից, այդ պատճառով հրամայեց ինձ՝ բացել ձեր առաջ Նրա այն, ամբողջ մարդկութեան այնքան-երկար-ակնկալած հանրամարդկային կամ մարդասէր Կրօնը, և սրանով փրկել ձեզ (իսկ ձեզանով և շատ մարդկանց) այսպիսի մշտնջենական կորստից։ Ահա կարդացէք այս գրքոյկը երկիւղածութեամբ և հաւատով՝ ըստ բանականութեան,3) ըստ համաշխար-

1) 2 Մ. 3--18: 5—1, 3: 7—16: 8—1, 20: 9—13: Ովս. 13—4: Գ. Ե. 22—6, 16:

2) Գ. Ե. 3—16:

3) Հռովմ 10—2.



հային պատմութեան և ըստ խսկական, Հրէական Սուրբ Գրքի, և դուք անհերքելի կը համոզուէք Նրա այս հրաշալի համաեղբայրական Կրօնի մէջ, և հետևապէս անչափ կ՚ուրախանաք1) և կը մատուցանէք Նրան դրա համար հրապարակական շնորհակալութիւն, իսկ ինձ, Նրանից Ուղարկուածին, դուք կ՚ուղարկէք ձեր անկեղծ —բարեկամական ողջոյնը, աւելի մեծ, քան Դարեւոր Մանթեֆիորի, իսկ շատ կարելի է և Եհովային եղբայրական համբոյր։ Ամէն։

2)

אֲנֹכִי הוּא

לְבְרִנְתָעֲהוּלְאוֹרְגוֹנָם

אֲנִי

**Բ Ն Ա Բ Ա Ն**

Ով դեռ ևս բոլորովին չի խլացել արիւնահեղ—թնդանօթային որոտներից, դժոխային—գլարձալի ձայներից, քահանայական, պաստօրական, մօլլայական և ռաբբիական, սատայանական—հիանալի—խմբերգ շարականների, մեծ

1) 1 Կոր. 13—6:

2) Ես իմ դաշն (Յուդայական) ժողովրդի հեթանոսների հետ և լոյս հեթանոսներին։

նուագախմբերի և թմբուկների, նա թող լսի հետևեալ մարգարէական խօսքերը.

„Եւ ես տեսայ առանձին հրեշտակի, Սաւառնող երկնքի վրայ, Նախայաւիտենական Աւետարանը1), որպէսզի այն ազդարարի աշխարհի վրայ ցրուածներին (յուդայականներին), նաև իւրաքանչիւր հեթանոսական ազգի, ցեղի, տոհմի և լեզուի: Գ. Ե. 14—6: Ես. 41—25: 42—1...6: 46—11: Մաղ. 1—11:

Յաւ է ցամաքի և ջրի վրայ ապրողներին, որովհետև ձեզ մօտ եկաւ Սատանան2) սոսկալի կատաղութեամբ, գիտենալով որ իրան քիչ ժամանակ է մնում3), և նա կը ծածկի (նրա դժոխային) խաւարով ամբողջ աշխարհը և կը կուրացնի բոլոր ազգերին, քանի որ հասել է փորձութեան համաշխարհային տարեդարձը կամ երկրի վրայ բոլոր ապրողների կորուստը“4):

## ԵՒ ԱՅՍՊԷՍ.

Ականջ դրէք Իսրայէլի երկու ցրուած ցե-

1) Կամ յունարէն Աւետարանի հետ դարի սկզբից:

2) Եփրայական ձորով Սատանայ, գերմաներէն Տէյֆէլ:

3) Մարդկային ցեղը ոչնչացնելու համար:

4) Գ. Ե. 12—12: 3—10: Ես. 60—2: 2 Տիմ. 3—1...8:



ղեր Եհովայից ձեզ տրուած հետևեալ կոչին.

«Երբ որ կհասնի ձեզ Իմ այս ձայնը, այն ժամանակ մի խստացրէք ձեր սրտերն Իմ դէմ, նրա նման, ինչպէս չլսեցին Ինձ ձեր նախնիքը Մերիբի1) օրով, այսինքն՝ վերադարձէք դուք դէպ Ինձ, այդպէս էլ Ես կը վերադառնամ դէպի ձեզ2), իսկ այլապէս կը ոչնչացնի ձեզ Սատանան. բայց իսրայելացւոց թագաւորութիւնը Եհովան կը հիմնի 144,000 հրէաների և 10 արսարեթական ցեղերի վրայ»:

## ՁԱՅՆ

Եհովայից այս ներկայ համաշխարհային Ուղարկածի նրանից հեռացած յուդայականներին:

Էհ, դուք, 3500 տարի Եհովային հակառակողներ, կամ ոչնչով Սատանայից պոկ չեկող յուդայականներ:

Լսեցէք երկիւղածութեամբ և պատասխանեցէք ինձ, Եհովայից ձեզ Ուղարկածին, հետևեալ հարցերին:

1. Հ. Եհովան յայտնում է ձեզ, որ՝ „դուք ամենայամառ, անպիտան, անհաւատ և Տմարտի ազգ էք. կոյր էք, խուլ, պղնձէ ճակատնե-

1) Սաղ. 95 (96) 7...9: 2 Մ. 17—2: 4 Մ 14—22, 28, 35:

2) Զաք. 1—3. Եզ. 18—31: Ես. 31—6: 5 Մ. 30—1...8:

ներով, քարացած սրտերով, երկաթէ ծոծրակներով, սպանողներ Նրանից1) ձեզ բոլոր ուղարկուածներին և չգիտէք Նրան. և Նա ամէն օր պարզում է ձեզ Իր ձեռքերը և խնդրում է ձեզ, որ դուք միանաք հեթանոսների հետ համամարդկային կամ Նորուխտ-Իսրայէլական հաւատի2) մէջ և վերադառնաք դէպի Նա"3):

Ո՞վ է ներշնչում ձեզ, 3500 տարուայ ընթացքում, չը հաւատալ Նրա այս խօսքերին: Եւ մինչ Երբ դուք պէտք է շարունակէք այդպիսի դժոխային յամառութիւնը, առանձնութիւնը ամբողջ մարդկութիւնից և ձեր մռայլադէ-անողոք անհաւատութիւնը:

II. Հ. Եհովան յայտնում է ձեզ իմ մասին այսպէս՝ „որ" Նա դարձրեց ինձ ամբողջ աշ-

1) Եւ մինչև իսկ Նրան իրեն տես VII Հ:

2) Որի օրէնքը կայանում է միայն մի խօսքի կատարման մէջ, սիրոյ, այսինքն՝ Անձնազոհ սիրոյ դէպի ԵՀՈՎԱՆ և Ընկերական դէպի իւրաքանչիւր Նրան հաւատացող մարդը:

3) Եզ. 2—3.. 8: 3—7: 18—31. Ես. 43—8. 48—4: 31—6: 56—7. 55—5, 6: 19—23... 25: 1—2, 3, 13..15. 59—2..15: 65—1, 2: 45—5: Եր. 7—24.. 28: 31—33 (34): 3—14, 12: Ովս. 14—2: Զաք. 1—3: Յովնան 2—12, 13: Մաղ. 1—11: Մար. 11—17: Գ. Ե. 11—1, 2: 15—4:



խարհի լոյսը և ձեր1) դաշն հեթանոսների հետ իմ միութիւն հաւատի, „ինչպէս ցոյց է տուած պատճառի մէջ: Այն ժամանակ ո՞վ է ներշնչում ձեզ հակառակել և Նրա այս կամքին, այսինքն չը ճանաչել ինձ որպէս համաշխարհային լուսաւորիչ և ձեզ շաղկապող հեթանոսների հետ նրա՞ այնպիսի նոր հրէական հաւատի մէջ, որ լինէր արդէն ընդհանուր Ադամի բոլոր սերունդների համար, և քայքայէր 1000 տարով բոլոր ցեղային և դաւանաբանական գժտութիւնները կամ բոլոր մարդկանց գլխաւոր ցանկապատերը:

Փորձեցէք լսել տալու Եհովայի այս խօսքերը և այս գրքոյկը, թէկուզ աղօթական վայրեններին, այն ժամանակ նրանք էլ կ'ասեն ձեզ նոյնպէս, ինչպէս և ԵՀՈՎԱՆ, որ՝ «Դուք կոյր էք, խուլ և պղնձաճակատներ կամ ամենաանպէտք և ամարդի ժողովուրդը:

III. Հ. Յայտնի է ամբողջ աշխարհին, որ այսպէս է ասում ձեր մասին Եհովան՝ „եղը

1) Այսինքն՝ Իսրայէլի երկու ցրուած ցեղերին որովհետև 10 ցեղերը խելքի եկան դեռ Սալմանասար թագաւորի ձեռքով նրանց գերելու ժամանակ, 700 տարի Ք. ծ. ա. եւ այն ժամանակ էլ ԵՀՈՎԱՆ վերցրեց նրանց Իր մօտ Արսարէթ և հրամայեց Անմահ թագաւոր Մելքիսեդեկին՝ Պահպանել նրանց այնտեղ Սատանայից:

գիտէ, ով է Նրան տիրապետում, և էշն իր տիրոջ ախոռը. իսկ Յուդայեանները, չը նայելով և անուանում են իրանց Իմ ժողովուրդը, սակայն նրանք չեն ճանաչում Ինձ1). այդ պատճառով սկսեցին որոնել Ինձ նրանք, որոնք իսկ չէին լսել Իմ մասին. Ինձ սկսեցին գտնել նրանք, որոնք իսկ չէին որոնում Ինձ, այսինքն՝ և հեթանոսների մօտ, որոնք չարտասանեցին մինչև անգամ և Իմ Եհովայի անունը. Ես աղաղակում եմ՝ Այստեղ եմ ԵՍ։ Այստեղ եմ ԵՍ։ Իսկ ինձնից հեռացած Յուդայական ազգին Ես ամեն օր մեկնում եմ Իմ ձեռքերը, բայց նրանք երես են դարձնում Ինձնից2)." Երկնից գրքում իսկ Եհովան ուղղակի յայտնում է ամբողջ աշխարհին, որ՝ «Նա միացնում է մարդկանց 144,000 Անմահ հրեշտակների հետ բոլոր ցեղերից, տոհմերից, ազգերից և լեզուներից3)» ուրեմն դուք ինչու չէք տեսնում Եհովայի այս խօսքերից, որ Նա դեռ Խոր հնութեան մէջ ընտրել է Իրան համար ծառաներ ամէն տեսակ հեթանոսներից։4) Ուրեմն

1) Ես. 1–2, 3. 45–5: Եր. 31–33 (34):

2) Ես. 65—1, 2.: Ովս. 11–1.

3) Գ. Ե. 7–8, 9. Ես. 56–3..7.

4) Մինչև անգամ դեռ Աբրահամի ժամանակ (և մինչև Աբրահամը) կային եհովականներ հեթանոսներից 1 Մ. 14—18, 21. 16—13. 14 2 Մ. 18—10..12 4 Մ. 22—18. 23–4. այսինքն՝ Մելքիսեդէկ, Յոբ, Բաղաամ, Յոթոր և մինչև իսկ Նաբուգոդոնոսոր թագաւորը։ Եր. 25–9.



ձեզ էլ ինչպիսի մեծ ապացոյց է հարկաւոր Եհովայի խօսքերի ճշմարտութեան համար, որ՝ „Դուք կոյր էք. խուլ. պղնձէ ճակատներով և չը գիտէք, որ Նա ոչ ոքի չի ցանկանում մահ Իր նմաններից կամ յետնորդներից առաջինին, Նրանով ստեղծուած և Նրան սիրելի մարդուն“։

IV. Հ. ԵՀՈՎԱՆ միշտ պահանջում էր և մինչև այսօր էլ պահանջում է ձեզանից՝ «որ դուք հնազանդւէք ձեզ մօտ Նրանից1) ուղարկուածների խօսքերին“. ուրեմն ով է ստիպում ձեզ հակառակել Նրա այս հրամանին, այլ հնազանդուել սատանայական թալմուդականներին և մինչև անգամ խաւարադև–ամարդի Alliansy? այսինքն՝ Սատանայից ուղարկուածներին, Եհովայի օրէնքի սուրը նախանձախնդիրների դիմակի տակ։ Այն ինչ այն գիրքը, որ գրեց Սինայի վրայ Ս. մարգարէ Մովսէսը նոյն Ինքն Եհովայի խօսքերով (կամ այն գրքից, որ Եհովան կռնատակին բերեց Սինայի վրայ)2) կորաւ Սողոմոնի մահից յետոյ անմիջապէս. և յետոյ, թէև գտնւեց գանազան անպէտք բանե-

1) Եր. 26–5: 25—4. 7—25, 26: 5 Մ. 18—18, 19: Գ. Ե. 11–3..5: 14–6:

2) 5 Մ. 33—2. Եհովայի այս գիրքը գրուած էր լուսեղէն (կամ ելեքտրական) տառերով։

րի տակ տաճարի նկուղում արդէն Ովսէ թագաւորի ժամանակ, բայց այդ բնագիրն էր արդեօք գտնւեց, Սրա մասին ոչինչ չի ասւում 4 թագ. մէջ 22—8 և 2 Մն. 34—15: Հաւատալի է միայն այն, որ դեռ Երուսաղեմի տաճարի առաջին աւերման ժամանակ անյայտացաւ օրինաց գրքի բնագիրը այնպէս, որ չը մնաց մինչև անգամ նրա ոչ մի պատճէնը. այլ մնաց միայն աւանդութիւն, որ նա ուղարկւեց պահւելու համար անմահ հեթանոս Մելքիսեդէկի մօտ կենդանիների աշխարհում: Սաղ. 27 (26)—13: Ես. 38—11:

Էլ ուրեմն ձեզ ինչպիսի աւելի զօրեղ ապացոյց է հարկաւոր Եհովայի խօսքերի ճշմարտութեան, որ «դուք բոլոր ազգերից ամենաանպիտան և ամենաանհաւատ ազգն էք. որովհետև այժմ վայրենիներն անգամ պարզ տեսնում են, որ՝» սուրբ գրքի1) ընթերցանութեամբ է նիւթում ձեզ2) համար Սատանան կորուստ, և որ Եհովային ոչնչով չի կարելի հաճոյանալ, քան միայն Նրա առաքեալի հետ իմի լինել, ինչպիսի սատանայական անհեթեթութիւնից կազմւած այժման ձեր սուրբ

1) Կամ սուտերէն Աստուածաշունչ գրքի:

2) Մինչև իսկ բոլոր ազգերին, նայիր պատճառը:



ես ցոյց ուի ձեզ «ազգերին լոյսի» երկրորդ մասում, XVIII:

V. Հ. Եհովան յայտնւում է ձեզ, իսկ ձեզնով և բոլոր մարդկանց. «ոչ մի զոհաբերութիւն Ինձ ես չեմ քարոզել ձեզ.1) որովհետև Ես ձեր սէրն2) եմ ուզում, և ոչ թէ զոհ, և որպէս զի դուք իմանաք, թէ Ես ով եմ, և ոչ թէ ողջակէզ: Հետևապէս՝ դուք մոլորւում էք և չը գիտէք, որ բոլոր գրւածքները (Սինայի և մարգարէական)3) կայանում միայն մի սէր4) խօսքն իրագործելու մէջ: Իսկ ձեր շաբաթները, պասերը և տօները ատում են Իմ հոգին:5) Եւ Ես ձեր թագաւորն եմ, Հայրը „Վարդապետը (կամ Ռաբբին) և մեսիան, և ոչ թէ Դաւիթը, ոչ Ռօդշիլդը, ոչ Մօնտէֆիորը և ոչ մի այլ մէկը“6). ուրեմն էլ ինչո՞ւ դուք, մինչև անգամ 4000 տարւայ ընթացքում չէք տեսնում և չէք լսում Եհովայի այս քարոզները: Իսկ վայրենի

37602

1) Եր 7—22, .6. Ես. 1—13...15:

2) Եբրայերէն՝ մարմրուկը դէպի ՆՍ:

3) Եւ նոյն իսկ բոլոր Կրօններում:

4) Ովս. 6—6: 5 Մ. 6—5: 1 Սամ. 1 թագ. 15—22, 23: (Ես. 28—10):

5) Ես. 1—13...15:

6) 1 Սամ (թագ) 8—7. 12—17, 19: Ես. 33—22 41—21. 43—15. 45—17: 17—17. 44—6. 48—12 (11) 52 7. 24—23. 1—2 3. Միք. 4—7. Սոփ. 3—15: Եր. 3—4. Ովս. 13—4, 5 Մ. 14—1. 2 Մ. 4—22: Գ. Ե. 22—6, 16:

կարաշէնները պարզ լսեցին Նրա այս խօսքերը և ընդունեցին նրանց իրագործելու առանց որ և էյեղաշրջումների կամ առանց Տալմուդի Եզեկ. 3—6: Ես. 65—6:

VI Հ. Ձեր իսկ եղբայրը, միայն Նոր-ուխտի հրէան1), որ կորստի է մատնում ձեր հալածանքից և քրիստոնէական ռամկանութիւնից, որ կաշառուած է ձեզանից, բարբառում է ձեր ազնուականներին և արիստոկրատներին այսպէս.

„Հրէայ եղբայրներ, պճնուածներ ոսկով և թանկագին քարերով վեր-վեր ցատկողներ բազմաերամշտախումբ երամշտութեան ներքոյ միլիոնաւոր հրավառութիւններով, կամ բոլոր դուք մշտագով տիրապետներ և մռայլադէ—տմարդի այս յուդայական աշխարհի արիստոկրատներ: Գ. Ե. 2—9. 3—9: Եզ. 2—3...8. չի՞ ցանկանայ արդեօք ձեզնից մէկը սիրել Ինձ այնպէս, ինչպէս քարոզեց Եհովան Սինայական և Երուսաղէմական քարոզներում": 3 Մ. 19—18: Մար. 12—31: Գաղ. 5—14: Դուք էլ պատասխանում էք Նրան „Ո՛չ, հերետիկոս և խռովարար, քո այս խռովարար կամ սոցիալիստական լաց ու կոծով դէպի մեզ՝ Դու չես գալի մեր

1) Կամ ոգեոր-բերլեխական եղբայրութիւնից:



դժոխային անէնութիւնը դէպի Քեզ և մեր բարեծնունդ (կամ համալսարանական) լուսաւորուած գիտանքը. և չես ստիպի մեր հեշտասիրութեամբ պարարտացած մամոնային եղբայրանալ այնպիսի դատարկամոր հերետիկոսի հետ, ինչպէս և բոլոր մեր սուրբ նախահայրերի ձեռքով սպանուած Եհովայից1) ուղարկուած ձեր եղբայրները: Իսկ բացի սրանից՝ մենք լաւ գիտենք որ Եհովայի այս քարոզները դեռ մահկանացուներից ոչ ոք չի կատարել, և ոչ էլ կարող կատարել. որովհետև մինչև այժմ էլ դեռ չի վճռուած հարցը. «Ո՞ւմ Դաւիթ թագաւորը, կամ այժմեան Ռօդշիլդ թագաւորը, պայծառափայլ, իշխան Մօնտեֆիօրը, Նորին գերազանցութիւն Պալեակովը, ցնցոտիներ հագնողը, կտորներ մաքրողը կամ գծուծը, մեծ Ռաբբին և սուրբ հրաշագործը (կամ ցադէկը), պէտք է սիրէ իրան մերձաւորը և սիրի նրան ինչպէս իր անձը»:2) ուրեմն, դնելով ձեռքը սրտի վրայ խոստովանեցէ՞ք Այն Սատածամալի դիմաց, Որը հաշեց Աբրահամի մօտ, գնաց և կանգնեց

1) Կամ մարգասէր և անթալմուդական սուրբ մարգարէները:

2) Երդւում եմ ճշմարտութեամբ, որ այս հարցը դեռ չի վճռուած բոլոր սատանայական մարդկանց և կրօնների մէջ:

նրա հետ սուրբի մօտ, մենամարտեց Յակոբի հետ և չկարողացաւ անցնել բանակ հրէաների մօտ, մինչև որ չը թաղեցին նրանց հողի մէջ իրանց անմաքրութիւնները1) և որի անունն է יְהוָה, որ այս դուք գովասանք էք արտասանում, և ոչ վատաբանութիւն Նրա մասին: Երկիցս երդւում եմ, որ ճշմարիտ և ուղիղ են Եհովայի խօսքերը, թէ՝ դուք էք Սատանայի ժողովը, և ոչ թէ Եհովայի ժողովուրդը»: Գ. Ե. 2—9: 3—9: Եզ. 2—3...8:

VII. Հ. Այսպէս է ասում Եհովան Ինքն Իր մասին, այն ժամանակ, երբ հրէաները կը տեսնեն (אֵלַי mich), որ Ես Նա Եմ, որ խոցուած եմ նրանց ձեռքով, կը հեկեկան (նրանց դէպ ինձ ունեցած այսպիսի բարբարոսական վարմունքի մասին) և կը վշտանան (Սատանայի ձեռքով նրանց այնպէս խաբւելու մասին). և կը հիմնեն նրանց երկրում (այսինքն՝ Պաղէստինում) այնպիսի սուգ, որպիսին կար նրանց մէջ Գադադ—Րիմօնի օրով, Մագեդդէյեան հովտում2): Եւ այս սուգը կը լինի նրանց մօտ նրանց իւրաքանչիւր ազգատոհմի մէջ առանձին: Դաւթի ազգատոհմն առանձին, և նրանց կանայք առանձին. Նաթանի

1) 5. Մ. 23 - 12...14:

2) 2 Մն. 35 - 22:



ազգատոհմն առանձին և նրանց կանայք առանձին Ղևիի ազգատոհմն առանձին, և...1) և կը խոստովանեն ու կ՛ասեն. „Նա թւաց մեզ չնչին և անարժան այն պատճառով, որ Նա ունէր մարդկային ցաւեր և տկարութիւններ: Եւ միմիայն այս պատճառով մենք բոլորս թէ ատեցինք և թէ մերժեցինք Նրան մեզանից, ինչպէս ամենաանպիտան մարդուն2): Բայց թէպէտ և ճշմարիտ է այն, որ Նա պատեց իրան մեր իսկ մարդկային, հիւանդոտ և տկար մարմնով. սակայն, երբ Նա տարւեց տանջւելու և սպանւելու, այն ժամանակ չը բաց արեց Իր շրթունքները. այլ գնում էր այնպէս հանգիստ, ինչպէս մորթւելու տարւող գառը, կամ այնպէս խաղաղ, ինչպէս ոչխարն իրան խուզողի առաջ": Ես. 53—3, 4, 7:

Բացի խաչելութիւնից կատարւեց և այն, որ Նա, ինչպէս Յուդայի3) թագաւոր ,մտաւ. Երուսաղէմ նստած աւանակի վրայ, մատնւեց 30

1) Զաք. 12—9...14: Գ. Ե. 1—18. 22—6, 6:

2) Օրինակ՝ ինչպէս ապօրինի զաւակը, հերետիկոս և իշխանութիւններին ու արիստոկրատներին անհնազանդը: Ղուկ. 23—2, 5, 14: Գործ. 24—14, 22:

3) Տես, V Հ.

արծաթով1) առաջացաւ Բեթղեհէմից,2) շրջեց Երուսաղէմում,3) և իսկապէս եկաւ երկրորդ տաճարը4) և Մահմէդ մարգարէին այսպէս ասաց․ «ո՛վ Մահմէդ, Դու կը տեսնես Ինձ (Եհովային) քո Աստծուն իմ ծննդեան և մահուան5) օրը, և Ես տալիս եմ Քո6) ժողովրդին Աբրահամական իսկ օրէնքը, բացի շաբաթից, փոխարինուած ուրբաթով, որպէսզի հրէաները չը յարեն այդ օրէնքին։7) Դէհ, տեսնո՞ւմ էք արդեօք անհերքելի ապացոյցը, որ դուք իսկապէս կոյր էք եւ խուլ, և մինչև անգամ մինչև այժմս էլ չէք ճանաչում ձեր8) Աստծուն և որ բոլոր ազգերն անհերքելի տեսնում են, որ բոլոր ձեզ վրայ սոսկալի հալածանքներն ու աւերումները տեղի են ունեցել միշտ միայն այն ժամանակ, երբ որ ձեզանից մէկը բարձրաձայն վատաբանութիւն արտա-

1) Զաք. 9—9։ 11—12։
2) Միք. 5—1 (2)։
3) Տես. Իմ ոտերի հետքերը։ Ես 60—13։
4) Տես ճանապարհ Ինձ։ Մաղ. 3—1։
5) Հրէական հաշուով մարտի 14-ին։
6) Այսինքն՝ Նրանով օրհնուած Իսմայէլացիներին։ Տես նախընթ.։
7) Տես 28-րդ սուրուն Ղուրանի մէջ։
8) Ուրեմն Դուք էլ ում էք մրթմրթում սինագոգաներում։



սանեց Եհովայի վրայ, Խաչուած Նազարէթցի Յուդայի Եօսի անուան տակ կամ յունարէն Յիսուս Քրիստոսի։ Աստծով ճշմարիտ է․ ամէն։

VIII Հ. Այսպէս յայտնում է Եհովան ձեզ, Նրան դաւաճանած և ցրուած Յուդայեաններին․ „վերադարձէք դուք Ինձ մօտ, այնպէս և Ես կը վերադառնամ ձեզ1) մօտ.“ ուրեմն էլ ինչո՞ւ դուք չէք կամենում վերադառնալ Նրա մօտ, այլ սպասում էք 1800 տարի, որպէսզի Նա վերադարձնի ձեզ (կրկին նոյն սատանայական թալմուդներով և Տմարութեամբ, որոնց պատճառով և դուք անիծուած էք Եհովայից2) ձեզ մօտ ուղարկուած մի ոչնէ Մեսիայի միջոցով, կամ այժմեան, Սատանայական Alliancy-ի միլիարդների կաշառքներով։

IX. Հ. Եհովան յայտնում է ձեզ և Ամբողջ Աշխարհին. որ՝ „բոլոր Թագաւորները, ազգերն ու ցեղերը գտնւում են կորստաբեր մոլորութեան մէջ կամ խաւարի մէջ, բոլոր Նրանց ճշմարիտ, չարագործ կրօններով հանդերձ, իսկ ձեզ, Յուդայեաններիդ, անուանում մինչև անգամ „Սատանա-

1) Տես բնագրանը։
2) Ինչպէս հաւատացնում է ձեզ և ցանկանում Մօնտիֆիօրը։

նայի ժողով»1)։ Ուրեմն դուք էլ ինչու չէք հաւատում Նրա այս խօսքերին, կամ նայում էք բայց չէք տեսնում ձեր և բոլոր Թագաւորութիւնների ու ազգերի այս կործանարար մոլորութիւնը։

X. Հ. Այսպէս է յայտնում ձեզ Եհովան իր Երկնից Գրքի մէջ. „Ով որ ձեզնից ծարաւի է (կենարար Ջրին կամ անմահութեան), նա թող մօտենայ (երկիւղածութեամբ) Այս աղբիւրին, և վերցնի Նրանից ձրիաբար։ Ահաւասիկ Ես ընթանում եմ պարապ և կանգ եմ առնում դռների մօտ ու բաղխում. և եթէ մէկը կը լսի Իմ Ձայնը, և կը բանայ Ինձ համար դռները, այն ժամանակ Ես կը մտնեմ նրա մօտ և կ՚ընթրեմ նրա մօտ նրա հետ միասին (ինչպէս Աբրահամի մօտ)։2) Յաղթողին էլ (Յուդայական սնահաւատութիւն, դժոխային կամ Թնդանօթային քրիստոնէութիւններ, լէշապաշտ և փայտապաշտ ուղղափառութիւններ, և ժանտախտաւոր Մահմետականութիւն) թոյլ կը տամ նստելու Ինձ հետ Իմ գահի վրայ, ինչպէս և Ես յաղթեցի (Սատանայի

1) Ինչպէս ցոյց է տրուած II. Հ.-ի մէջ պատճառում։

2) 1 Մ. 18—1..8, 20, 21..33։ 19—1..27։



դժոխային թալմուդներ)1) և նստեցի Իմ Հօր2) հետ Նրա գահի վրայ և Ես3) կը լինիմ նրան Աստուած, իսկ նա կը լինի Ինձ որդի։4)

Ուրեմն խոստովանեցէք մարդկային (բայց ոչ ամարդի կամ ջհուդական) խղճով, կա՞յ արդեօք մի տեղ աշխարհում, թէկուզ միլիոնից մէկը, այնպիսի յուդայ,5) որը լսում է այս Մաքին անհասանելի պարգևը Եհովայից. ինձ թւում է ոչ, որովհետև բոլոր յուդայեանների նպատակն է. «նստեցնել Յուդային (Մօնտեֆիոր Մովսէսին) Արքայական գահի վրայ Երուսաղէմում և երկրպագել նրան, ծունկ չոքելով նրա առաջ. և ապրելով բաւականութեան մէջ, իշխանութիւններում և ազա լինել հեթանոսների վրայ (մինչև անգամ և Եհովայի բարեկամների վրայ)6) և չը-

1) Մար. 7—5..8, 9, 12, 13..16։ 3 գլ. 18—20 ..23։

2) Եհովայի Հօր մասին տես Դան. մօտ 7—13, 14։ Գ. Ե. 4—3, 5։ Գործք. 7—55։

3) Բայց ոչ քո Հայրը։ Դան. 7—14։

4) Գ. Ե. 22—17։ 21—6, 7։ 3—20, 21։

5) Նոյնպէս և քրիստոնիան։

6) Կամ նմանների վրայ. Թագաւորներն Մելքիսեդէկի, Յոբի, Բաղաամի, Յոթորի, Զամօլվկինի, Պլութարքոսի, Բուդդայի, Զօրօաստրի, Կոնֆիկիուսի, Մահմէդի, Յովհ. Յուսի, Երօնիմ Պրագացու, Գ. Ժիժկու, Թովմաս Մինցէրի, Մեղինչի Իշխանուհու, Պետրոս Վրկլե Սվեդէնբորգի, Յակոբ Բեմի, Լիւթէրի, Սուսլովի, Վօղնիցին Նովիկովի, Բէզգուտկի Վ. Պաշկովի և Ինձ։

քանալ գոյութիւնից, ինչպէս Դաթանն ու Աբիրօնը,» այլ չը նստել Եհովայի հետ միասին Նրա երկնային գահի վրայ և անմահանալ ողջ անվերջ յաւիտենականութեան մէջ։

ԻՍԿ ԱՅԺՄ

Խնդրում եմ ձեզ և բոլոր հեթանոսներին Խաչուած Եհովայի Անունով, լսել երկիւղածութեամբ էլի Նրա հետևեալ յայտարարութիւններն Իմ՝ համաշխարհային Լուսաւորչիս միջոցով։

XI. Եհովայի կամ՝ Ցիտուսական Մարդասէր հաստի Նոր-կտակարանական—Դարայէլի կամ նամանարդկային համզանակը. Գ. Ե. 14—12։

Երկու համազօր սաստածամարդ կայ մեր արեգակնային համակարգութեան մէջ՝ Հօէայ Եհովան1) և Հեթանոս-Սատանան։2) Եհովան անմահ մարդկանց Աստուածն է, իսկ Սատանան մահկանացու Մարդկանց Աստուածն է։ 6000 տարի3) անցնելուց յետոյ՝ Եհովան կը յաղթի Սատանային, շղթայակապ կ՚անի նրան և կը ձգի խոր վհի մէջ (Ա-ի մէջ),4) կը վերականգնի խա-

1) 5 Մ. 10—17։ 2 Մ. 15—3։ Գ. Ե. 1—13...18։ 22—6, 16։ 3—12, 20։ Դան. 7—14։

2) 1 Մն. 21—1։ 2 Կորն. 4—4։ Ղուկ 4—6, 7։ Եփեսս. 2—23, 24։ Գ. Ե. 12—9։ 13—2.. 8։ 2—13։

3) Հրէական հաշուով։

4) Գ. Ե. 20։



ղաղութիւն, ազատութիւն և բարօրութիւն բոլոր ազգերի և ցեղերի համար 1000 տարով1) համաշխարհային Կառավարութեան տակ Երուսաղէմական Հաստրակապետութեան մէջ։ 1000 տարուց յետոյ Եհովան բոլորովին կը ոչնչացնի Սատանային գոյութիւնից բոլոր Նրան պատկանող մարդկանցով, կը շինի Նոր Աշխարհ, միլիոն անգամ աւելի մեծ սրանից և առանց ովկիանոսի ու ծովերի, և կը բնակւի նրա վրայ իր անմահ մարդկանց հետ 280,000 տարով։ Սրանից յետոյ Նա կրկին կը շինի Նոր Աշխարհ, առաւել եւ լաւ նրանց կեանքի համար և այլն։ Նա կը սկսի, ժամանակ առ ժամանակ, վերաշինել երկիրը շարունակ աւելի լաւ և աւելի լաւ, մինչ Անվերջ,Մաքրն-անհատանելի կատարելութեան, և ապրել նրա վրայ մշտնջենաւոր անմահ մարդկանց հետ միասին։ Գ. Ե. 21—3։

Երուսաղէմ քաղաքն էլ, կերպարանափոխուած երկրի վրայ, վայր կ՚իջնի երկնքից ,շինուած երկնային մարդկանց ձեռքով (այսինքն՝

1) Խաղաղութեան և միակրօնութեան 1000 տարուց յետոյ՝ Սատանան կը յօրինի 111 տարով կրկին Նրա ղանազան ճշմարիտ Կրօնները, ամենասոսկալի ելեքտրական թնդանօթներով և մեղաւթող—հրաշագործ քանդանօթներով, պատարաներով և մօլաներով։

միւս մոլորակների վրայ ապրողների), զարդարուած թանկագին քարերով. իսկ փողոցները սալայատակուած են թափանցիկ ոսկով, երկարութեամբ, լայնութեամբ և բարձրութեամբ 2000 վերստ, շրջապատուած աննման Յասպիսի պարսպով, 12 դարբասներով 12 մարգարիտներից, և Նրանց վրայ Իսրայելի1) 12 ցեղերի անունների արձանագրութիւններով. իսկ էնդոմէզիների (կողքի շինութիւնների) վրայ 12 առաքեալների2) անունները և Քաղաքի մէջտեղում կը լինի Եհովայի Պալատը. իսկ տաճար և ոչ մի զոհաբերութիւն արդէն չեն լինի:

Պալատի տակից կը հոսի Գետ դէպի բոլոր փողոցները, և Նրա եզերքներին կ'աճեն զարմանալի, պտղատու, իւրաքանչիւր ամիս նոր պտուղներ արտադրող ծառեր: Այս պտուղներն ուտելուց՝ մարդիկ կը սկսեն ոչ ծերանալ և ոչ մեռնել, այլ ամբողջ մշտնջենական յաւիտենականութեան մէջ կը մնան անմահներ՝ տղամարդիկ 34 տարեկան հասակում, իսկ կանայք 16 տարեկան: Երուսաղէմից դուրս կը լինեն 24 թագաւորութիւններ՝ մահից ազատուած, աշխարհ-

1) բայց միայն Դանի փոխարէն՝ Մանասէն:

2) Ըստ սատանայական 13 առաքեալների: Գործք. 1—25, 26: և Հռոմ. 1—1:



մեան1) ժողովուրդներից: Եւ այս արտաքաղաքային բնակիչների մօտ թէպէտ նոյնպէս մահ չի լինի, բայց հիւանդութիւններ դեռ կը պատահեն, և նրանցից բժշկւելու համար նրանք հարկադրուած կը լինեն խնդրելու քաղաքացիներին՝ նրանց կենսատու ծառերի տերևներից: Գ. Ե. 21 և 22: Այս Քաղաքի աւելի մանրամասն նկարագրութիւնը տես. Օրինակ Իմ „Ժողովուրդներին լոյս և Յուդաներին խեղամտութիւն" Գրքոյքի մէջ:

Ահա թէ ինչպիսի Երուսաղէմ Քաղաքի մէջ է հրաւիրում Անվերջ ապրելու խաչուած Եհովան իւրաքանչիւր մարդու:

Կամ ահա թէ ինչպիսի նպատակ կայ իւրաքանչիւր մարդու համար՝ յարելու Եհովային: Սակայն Ես, ինչպէս Նրանից ուղարկւած, յայտնում եմ ձեզ, որ շուտով անմահ մարդկանց որոշեալ թիւը կը լրանայ և դռները կը փակւեն:2) Եւ այս պատճառով՝ ով կը լինի այնպէս բախտաւոր, որ կ'ստանայ այս Աստուածային կոչը դէպ Անմահութիւն, նա թող շտապի յարելու անմահ Մարդկանց Ժողովին:

XII. Այս Զարմանալի, համաշխարհային Աստ-

1) Մատ. 25—33, 46:

2) Մատ. 25—10, 12: Ղուկ. 17—34...36: Հռոմ. 11-25: Գ. Ե. 6—11: 13—8, 9: 15—15:

ամային Լուսատուի վկայութիւնը·

Այսպէս ուրեմն և Ես, Եսայի մարգարէի
նման, վկայ եմ կանչում Երկինքն ու Երկիրը.
որ Յուդայեանները, Քրիստոնեաները և Մահմե-
դականները դեռ չգիտեն իրանց1) Աստծուն, ոչ
Նրա պատերազմը Սատանայի դէմ և սատանա-
յական Յուդայեանների և դժոխային քրիստո-
նեաների դէմ, ոչ անմահ մարդկանց, ոչ Նրա
Բարայելական Թագաւորութիւնն Արքայէթում
կամ Մելքիսեդէկի ժամանակ, ոչ երկրի անվերջ
կերպարանափոխութիւնները, և չեն հասկանում,
որ հաւատալը Աստծուն (Եհովային) եւ ճշմարտա-
պէս հաւատալը Նրան՝ է այնպիսի տարբերութիւն,
ինչպէս Երկինքը երկրից, և ով որ չի լսի Եհո-
վայից Ուղարկուածին, նա չի լսել հէնց Իրան Ե-
հովային: Տես. IV Հ.

Ով որ կը հաւատայ Եհովային խօսքով և հե-
տևապէս կը լսի2) բոլոր մարդկանց դէպի մևա-

1) Իսկ բուդդայականները գիտեն որ Աստուածների
Աստուածը մարդ է իսկ, և որ Նա ինն անգամ յայտնել
է (կամ մարդացել) երկրի վրայ. և շուտով կը յայտնւի
10-րդ անգամ և վերջ կտայ բոլոր Երկպառակութիւն-
ներին, արիւնհեղութեանը և սովութեանը ամբողջ
Աշխարհում:

2) Գ. Ե. 3—22:



կրօնութիւն1) և Անմահութիւն Կոչող, Նրա այս
Ձայնը, նա թող լինի շատով Եհովայի2) բարե-
կամը և Իմը և օգնի Նրան. տարածելու Նրա այս
կենարար Աւետումը, այսինքն՝ արտագրի, կամ
տպագրի, թարգմանի (ով կարող է) ուրիշ լե-
զուներով, Տարածի և ցրւի այս գրքոյկը (կամ
ժողովուրդների (լոյսը) բոլոր թագաւորութիւն-
ների և ազգերի մէջ, և գլխաւորապէս Յուդա-
յեանների մէջ, Արևելքից մինչև Արևմուտք:

Ով որ չի հաւատայ Եհովային, այսինքն կը
հեռքի մինչև անգամ Նրա այս Անները և մա-
հից ազատող ճշմարտութիւնը, և կ'ասի ուրիշին՝
„ուղիղ չէ, ոչ բոլոր ազգերն ու թագաւորներն
են (կամ Ռօդշիլդներն ու Մօնտէֆիօրները,
կամ Պապերը, Պատրիարքները, Կաթողիկոսները,
Էկզարխները, Սուպերինտէդները և Մուֆտի-
ները) մոլորութեան մէջ. որովհետև մեր
(այս ինչ, կամ Թալմուդա-Յուդայական կամ Ոչ
Ղարայիմական) Կրօնն է ճշմարիտ (կամ Ուղ-
ղափառ, Ուղղահաւատ, Փայտահրաշագործ, Մեղ-
սաթող-թնդանօթային, Գործակալ-սրբուած կամ
Լիւտերական, քաղցրասէր-խալամական, Մեծա-
պահք-տանջողական և Ամենահրաշագործ Ֆակի-

1) Եփ. 4-13: Մաղ. 1—11 և II Հ.

2) Ղուկ. 12-4:

րական) և մենք, Յուդայեաններս, ենք ամենաընդունակ, դէպ Ճշմարտութիւնն Զգայուն—Ազդը, ոչ պղնձաձակատ. և կարիք չը կայ որ մենք նոյնպէս դժոխային-ամարդի ենք, ինչպէս և Կաթոլիկներն ու Կաֆօլիկները. և հետևապէս ոչ մի Խաչուած Եհովայի, ոչ Ուղարկուածին Նրանից Համաշխարհային Լոյսով և հաւատով, մենք ճանաչել և լսել պարտաւոր չենք, և բոլոր ժողովուրդները պէտք է դառնան միայն դէպի մեր (Տմարդի, կամ Թնդանօթային, բռնակալական և Արիստօկրատական կամ Ազգային կրօնը," այն ժամանակ այլպիսին; վատաբանութիւն ժայթքողը Եհովայի վրայ (Յուդայեանը, Քրիստոնեան, Մահմեդականը և Բուդդայականը) թող պատրաստ լինի կորստեան իւրաքանչիւր ժամ: Իսկ Յուդայեաններին յայտարարում եմ, որ ով Նրրանցից չի յարի դէպ Ինձ այս Նոր կատարանական Իսրայելական կրօնի մէջ, նա պիտի ըսպանուի, ինչպէս Կոռնեխոմ, կամ կ'այրուի, ինչպէս Բերդիչևում կամ կը մեռցնի ողնամանով: 1 Մակ. 7—41 : Եր. 36—30, 31: 39—7: Գ. Ե. 16—15: 13—10: և XIII և XIV յօդ.: Եւ նոյնպէս Նախազգուշացնում է Ազգերին Լոյս գրքի մէջ:

XIII Սատանայական մարդկանց ոչնչացումը



1000 տարով և Երկրի Նորոգումը՝ յարութիւն առած և նորոգած (կամ վերածնած) մարդկանց նրա վրայ երջանիկ կեանք ունենալու համար:

Եհովայի վերջին կամ Արժակեդոնական կռուի ժամանակ Սատանայի դէմ կամ հանրամարդկային Կրօնինը անջատուածների հետ, Լոյսինը խաւարի հետ, Անմահութեանը մահի հետ, բոլոր պալատները, Աղօթքի Տաճարները, Վանքերը, Արձանները, Զինուորական Բերդերն ու Մարակոցները կամ բոլոր և ամեն տեսակ բռնակալական Պատնէշներն ու Կայէնի ցեղի կողոպտիչ եկեղեցական Բեմերը՝ նրանց քաղաքներով և կալուածներով, կը քայքայուեն, Ամբողջ երկրագունդը կը ծածկուի արիւնով և հազար երեք հարիւր միլիոն մարդկային դիակներով. իսկ կը մնան կենդանի միայն այն մարդիկ, որոնք անձնազոհութեամբ յետ կը կանգնեն Սատանայից, կը ձգեն ամեն ինչ և միայն մի քուրձով և առանց յետ նայելու, մօտ կը վազեն Եհովային:1) Իսկ Յուդայեաններից նրանք, որոնք կը մերժեն Եհովայի այս համաեղբայրական, Նոր-Իսրայելական կրօնը և չեն հրաժարուի Դժոխային-ամար-

1) Ես. 34: 13—10,11 և 13, 15: 2—14. .21: 65 —15, 12: Դան. 12—2: Գ. Ե. 8—13: 11—18: 16—18 ... 21: 19—15, 18:

գի Alliance-ից, կ'այրեն աւելի սոսկալի, քան թէ Սոդոմն ու Գոմորը։1) Եւ երբ որ Երկիրը կը մաքրուի և կը նորոգուի, այն ժամանակ կը հետեւ-ւի մեռելների, այսինքն՝ միայն այս հաւատի համար տանջուողների, Առաջին Յարութիւնը և հազարամեայ Երուսաղէմի2) շինութիւնը։

Միւս մեռելները չեն կենդանանայ, մինչև որ չը լրանան 1000 խաղաղ տարիները։ Նշանա-կում է երջանիկ է և սուրբ նա, ով կ'արժանանայ յարութիւն առնել 1-ն յարութեան ժամանակ։ Գ. Ե. 20—4, 5։

XIV Պատիժ մեռելների երկրորդ Յարութեան ժամանակ Եհովայի այս Նոր-Կտակարանային-Իս-րայէլական կամ Համամարդկային Կրօնի բոլոր մեր-ժողներին.

Ըստ Ադամի բոլոր մարդիկ եղբայրներ են. կամ Եհովայի նմաններ, այսինքն՝ Յուդայեան-ներ և հեթանոսներ։

Թողէք շատ բոլոր և ամեն տեսակ ա-ռանձնակի կամ սատանայական հաւատները, թէպէտ և նրանք յօրինուած լինեն լուսափայլ հրեշտակների, կամ Յուդայական, Քրիստոնէական,

1) Մատ. 23—33։ 12—41, 42։ 11—22, 24։ Ղուկ. 13—28։ 23—30։ Ես. 65—15, 12։ Դան. 12—2։

2) Իսկ այս արդեօք շատ կը լինի։ Տես. 18 ոս-կեայ բեռները Օմարի Մզկիթում։



Մահմեդական և Բուդդայական հրաշագործների, և մինչև անգամ ամենասքանչելագործ Ֆակիր-ների ձեռքով. որովհետև յայտնում եմ ձեզ Նոյն Ինքն Եհովայի ասացուածքը, թէ՝ „Այս Խաղա-ղաւէտ Կրօնի բոլոր հակառակորդները, կամ Գա-զանութիւնից1) և Դայլապտութիւնից2) բաժանուել չը ցանկացողը կը տանջուեն այրող կրակով սուրբ հրեշտակների առաջ և Գառան առաջ (այ-սինքն՝ Խաչուած Եհովայի առաջ)։3) Եւ նրանց տանջանքի ծուխը պիտի բարձրանայ յաւիտեա-ններս յաւիտենից և չի լինի նրանց հանգիստ ոչ ցե-րեկը, ոչ գիշերը.4) Իսկ բոլոր խաղաղարարները (այսինքն՝ Եհովայի յարողները Նրա այս հա-մաեղբայրական Կրօնի մէջ) կը կոչուեն Նրա որ-

1) Այսինքն՝ զինուորախաղերից և արիւնահեղու-թիւնից, բռնակալութիւնից, Արիստոկրատիզմից, ըս-տրկութիւնից, սպանութիւններից, խաբեբայութիւնից, յափշտակութիւնից և վաշխառութիւնից կամ ջհուդա-կան Տմարդի Alliance-ից (Դաշնակցութիւնից)։

2) Այսինքն՝ ժողովրդին թշնամաբար և արիւնա-հեղ Քրիստոնէութիւնից, միսիոնէրականութիւնից. բիբլիական ընկերութիւնից և նոյն իսկ խաւարատեղծ Հին և Նոր կտակարանից։

3) Ինչպէս Փրկողի առաջ։ Այո,

4) Գ. Ե. 14—9...11։ 19—2, 3։ 20—15։ 21—8 22—15։ Ես. 65—15։ 66—17...24։ Դան. 12—2։

դինները։ Եւ հետեւապէս կը դառնան այնպիսի Անմահներ, ինչպէս և բոլոր խաղաղարարները և դրա համար սպանուած սուրբ մարգարէները և այս իսկ Կրօնի 144,000 հրէաները։ Աստծով ճշմարիտ, Ամէն։

XV. Այժմեան ուղիղ ճանապարհը դէպ Անմահութիւն Յուդայականներին և հեթանոսներին.

Զարթնեցէք, Հարազատներ, Խելահաս եղէք. Իսրայելի Երկու ցրուած Ցեղեր, ինչպէս խելահաս դարձան Նրա 10 Ցեղերը, այսինքն՝ հրաժարւեցէք Այս մահկանացու, Անասնական, Գազանային, Գազանական կամ Սատանայական կեանքից և Նրա Դժոխային-սնահաւատ Յուդայական Կրօնից մինչև վերջին տառը. միացէք հոգով և սրտով հեթանոսների հետ Նրա այս Նորկտակարանական-Իսրայելական, Մարդասէր, Համամարդկային Կրօնի մէջ. դրէք ձեզ վրայ Եհովայի ամենածանր խաչը, և ընկնելով Խաչային ծանրութեան տակ 7-ը Որոտմունքներով1) առած դէպքերի ընթացքում, եկէք ձեր Թագաւոր Եհովայի մօտ, այն դիտաւորութեամբ, որպէսզի մեռնէք Նրա առաջ խաչի վրայ։ Եւ այն ժամանակ, Ձեր մահով կը հետևի Ձեզ Յարութիւն.2)

1) Գ. Ե. 10—3, 4։

2) Գ. Ե. 14—12, 13։ 20—4, 5. Եզ. 37—12...14։ Հռոմ. 11—15։ Ովս. 13—14։



Յարութիւնով՝ նորոգութիւն. իսկ նորոգութեամբ՝ Նոր կեանք և ամէն ինչ Նոր հանդիսաւորութեամբ հանդերձ. Իսկ ձեր հանդիսաւորութեամբ կը հանդիսաւորւի և ամբողջ մարդկութիւնը ուղիղ 1000 տարով։

Այսպիսի իսկ ճանապարհով պէտք է ընթանան դէպ Անմահութիւն և բոլոր այն հեթանոսները, որոնք նոյնպէս կը հրաժարւեն բոլոր առանձնակի կամ Սատանայական հաւատներից և Մահկանացու կեանքից և կը յարեն Ձեր Այս-իսկ հանրամարդկային Եհովային1) Կրօնին։

XVI. Մի պարծեցիր, իմաստուն, քո իմաստութեամբ, ոչ՝ ուժեղ, քո ուժով և ոչ՝ հարուստ, քո հարստութեամբ։ Սակայն ով ուզում է Պարծենալ, նա թող Պարծենայ միայն նրանով, որ դու գիտես՝ ով եմ Ես և հասկանում ես Իմ Կտակները։

Անձ միայն այսպիսի պարծենկոտութիւնը հաճելի է Ինձ «Ասում է Եհովան։2)

1) Որովհետև շուտով կը սկսի քարոզւել և Սատանայի հանրամարդկային Կրօնը, այսինքն՝ հաւատ ոչ դէպի Եհովան, այլ դէպի Արարիչը բոլոր անհամար Արեգակների, մոլորակների և գիսաւոր աստղերի Անվերջ Ամայութեան մէջ, և հոգիների քշելը դէպի նա, այլ ոչ անմահութեան։

2) Եր. 9—22...24։

XVII. Ենովայի Համամարդկային կրօնի լեզուի մասին:

Որովհետև հաճելի էր Ենովային՝ յայտնել Նրա Այս Գեղարար Աւետումը Ռուսաց լեզուով (կամ ինչպէս Նա է ասում. «Յուդայեաններին1) համար օտար,)" այն ժամանակ սա աններքելի նշանակում է, որ այժմ Ռուսաց լեզուն Նա բարծրեց Ամենատարրը բոլոր լեզուներից, կամ Նոր-Կտակարանային-Իսրայէլական կրօնի լեզու, նմանապէս բոլոր Նոր-կտակարանային Հրէաները և նրանց յարած Հեթանոսները Պէտք է իմանան Ռուսաց լեզուն անպատճառ, և կատարել՝ Նրանով իրանց բոլոր աղերսանքներն ու աղօթքները դէպի Ենովան։

XVIII. ԵՀՈՎԱՅԻ2) Այս Յաւիտենական Աւետման համառօտակի կրկնութիւնը՝ Նրան մշտական յիշողութեան մէջ Պահելու համար.

1. 6000 Տարւայ վերջերը բոլոր ազգերը կը համոզւեն որ խաչի վրայ Խոցւած Հրէայ Ենովան անմահ մարդկանց Աստուածն է, բայց Հեթանոս Սատանան՝ մահկանացու մարդկանց Աստ-

1) Եւ նոյն իսկ ժողովրդական կամ հասկանալի խօսքերով. բայց և այնպէս Յուդայեանները չեն լսում Նրան։ Եւ. 28 - 11...13։ Նշանակում է Յուդայեաններին ոչնչով չեն բաժանի Սատանայից։ Զարմանալի է։

2) Կամ յունարէն՝ Աւետարան Կեանքի սկզբնաւորութիւնից։ Գ. Ե. 14—6 և II. Հ.։



ւածը:

2. Եւ երբ Սատանան կը ձգւի խոր վիհ մէջ, այն ժամանակ Ենովայի Տաճարը Նոր Սիօնի Սարի վրայ, կը դառնայ արդէն Աղօթքի Տաճար բոլոր ազգերի համար:

3. Եւ այսպիսի Ընդհանուր Միահաւատութեան միջոցով կը ոչնչանայ Ամբողջ Աշխարհից ամեն տեսակ ցեղային և կրօնական թշնամութիւնն ու ատելութիւնը և „ՀԱՅՐԵՆԻՔ" խօսքը և կը վերականգնի Ընդհանուր, Եղբայրական սէր դէպի Ենովան, խաղաղութիւն, ազատութիւն, ուրախութիւն և բարօրութիւն բոլոր մարդկանց մէջ 1000 տարով:

4. Ենովան դարձնում է մարդուն Անմահ միայն անձնազոհ Տոկունութեան համար այս Խաղաղարար Հաւատի մէջ, պահելու համար իր ամբողջ կեանքում Միահոգի և Միասիրտ բարեկամութիւնը դէպի Նրա բոլոր բարեկամներն ու բարեկամուհիները և հաւատարմութեան համար դէպի Նրանից Ուղարկւածը:

5. Պէտք է խուսափել, ինչպէս Խօլերայից՝ Քրիստոնէութիւնից, Յուդայականութիւնից և այն որբազան Գրքից, որն արգելում է Երկրպագել, Խնկարկել և Զոհեր մատուցանել միայն יהוה: Անւան առաջ որը կոչւում է բոլոր մարդկանց ոչ

դէպի համամարդկային հաւատ դէպի Եհովան և ոչ դէպի Նրա Ընդհանուր Աղօթքի Տաճարը Սիօնի սարի վրայ, այլ դէպի առանձնակի հաւատոներ և Տաճարներ ուրիշ սարերի վրայ և տեղերում և ուրիշ անունների տակ. որովհետև իւրաքանչիւր Սրբազան գրութիւն որ հեռացնում է Աստուածամարդ Եհովայից դէպի այլ աստուած և անուն, է հէնց այն խաւարը, Որով Սատանան խաւարեցրել է բոլոր մարդկանց: Աստծով, Աստծով ճշմարիտ է և նոյն իսկ Կանչում եմ վկայ այս ճշմարտութեան նոյն ինքն Եհովային իրան: Տես. IV. Հ.:

XIX. Եհովայից այս համաշխարհային ուղարկուածի փրկարար խորհուրդը եւ սուրբ հրամանը իւրաքանչիւր մարդու, որի սրտում տեղ գտաւ Նրա այս ձայնը.

Խաբւած և այս1) Աշխարհի Աստծով կենդանի մեռցրած, մարդկային ուստր:2)

Եթէ դու հասունացար Եհովայի այս Սիւրմայից և պարզապէս տեսար, որ բոլոր առանձնակի կրօնները, զանազան ազգային հրաշագործութիւնները3) և հայրենասիրական օրէնականութիւնները և կրօնական գաղանութիւնները,

1) Գ. Ծ. 3—1, 18: Մատ. 8—22: 1 Տիմ. 5—6.

2) Կամ մարդկային դուստր:

3) Գ. Ե. 13—13, 14:



հոգիների քշելը դէպ արքայութիւն և դժոխք, և Համալսարանական Մօտգիմը1) են՝ դժոխային Խորամանկ հնարածը Սատանայի, մարդկանց Անմահութիւնից հեռացնելու համար, ուրեմն դու անյապաղ գնա առանձնացած տեղ, չոքիր այնտեղ יהוה Անւան առաջ և երեսի վրայ ընկնելով՝ յայտնաբար ասա Այսպէս. Նախայաւէտ-Անմահ մարդ, Խաչուած Եհովա կամ Յիսուս Քրիստոս:

Ընկնելով քո Ամենասուրբ Ոտերը՝ ԵՍ անարժանս,2) փառահանում եմ խնդրել քեզ. ընդունիր և ինձ Քո Անմահ մարդկանց շարքը. որովհետև ես էլ երդւում եմ Քեզ, որ այսուհետև կը սկսեմ ճանաչել իբրև իմ Աստուած և Մահից Ազատող-Փրկիչ միայն Քեզ միայնակ, և խոստանում եմ օգնել Քեզ քանդելու բոլոր դժոխային Քրիստոնէութիւնները և Սատանայական Յուդայութիւնը, և էլ ամէն տեսակ առանձնակի Կրօնները, և վերականգնելու քո Նոր-կտակարանային Աստուածահրէական Թագաւորութիւնը, Խաղաղութիւնը, Ազատութիւնը և Բարօրութիւնը բոլոր ազգերի համար և տարածելու Քո Այս կո-

1) Անվերջ համաստորդութիւնների Անհեթեթ Աբարիչը:

2) Կամ անարժանուհիս:

չը դէպ Անմահութիւն և Համամարդկային Կրօնը Յուդայեանների և հեթանոսների մէջ, և երբէք չեմ հակառակի Քո հրամաններին Քո այս Առաքեալի միջոցով։

Ու եթէ դրա համար կը կանգնի իմ դէմ Սատանան նրա Ամբողջ Թալմուդա-Յուդայական և Դժոխային Քրիստոնէական Զարութեամբ, այն ժամանակ Ես պատրաստ եմ1) գնալ դէպի Թէկուզ և այնպիսի խաչ Մարտիրոսական Մահ, որին և Դու ինքդ համբերեցիր։2)

Բայց եթէ որ Ես դաւաճանեմ Քեզ իմ այս խոստման մէջ և կրկին վերադառնամ դէպի Սատանան, դէպի որևէ առանձնակի Կրօն, այն ժամանակ ուրեմն խոցիր Դու ինձ դեռ այս կեանքում, ինչպէս Դաթանին և Աբիրոնին. իսկ Մեռելների երկրորդ Յարութեան ժամանակ թող Ընկնեմ3) Սատանայի հետ Միասին հրային Լաւայի մէջ։ Ամէն։

Եւ քո այս երդումը դէպի Եհովան դու ուղարկիր ինձ մօտ. որովհետև առանց Նրան Ես չեմ ընդունի քեզ Նրա հաւատարիմ բարեկամների և Իմոնց թւում. որովհետև Ամենափոքր չը

1) Կամ իբրև կին։

2) Գ. Ե. 3—31։

3) Կամ իբրև կին։



միանայն Ինձ հետ է ոչ կատարեալ հնազանդութիւն և Վստահութիւն դէպի Եհովան։

XX. Աղօթք առ Եհովան Նրա այս Զարմանալի Սուրբեալի.

Ամենազօրաւոր եւ Նախայաւէտ անմահ Հրէայ Եհովա, Եղիա մարգարէի Աստուած, և Իմ Աստուած, Արդարացրու և իմ Առաքելութիւնը և հաստատիր և իմ Այս վկայութիւնն այնպէս, ինչպէս և Դու արդարացրիր և հաստատեցիր Հնումը Եղիա առաքեալին. որովհետև չէ որ Դու ինձ ընտրեցիր և ուղարկեցիր Աշխարհ Քո այս Յաւիտենից չը լուած գործի համար, մինչև որ կատարւեց Քո գուշակութիւնը Ես. մօտ—41—25։ 42—1...6։ 46—11։ Գ. Ե. 14—6։ Մաղ. 1—11։ և պարզ երևաց, որ ինչպէս Եղիայի կռիւը Հին Յուդայեանների և հեթանոսների դէմ, այնպէս էլ և Իմ այժմեան կռիւը էլի նրանց դէմ է առանձնակի Կռիւ միայն հէնց Քեզ՝ Նախայաւէտ մարդու, Հօր, Թագաւոր ուսուցչի եւ Հրէաների Մեսիայի համար, կամ մերժելու համար հաւատը դէպի մի ոմն բացարձակ Մօաբիմը կամ Աստուածաօդին,1) Որին ոչ ոք մարդկանցից, Եւ նոյն իսկ հրեշտակներից, երբէք, ոչ մի տեղ չի տե-

1) Աստղի, Յամաքիկի, Մարմնիկի Աստծու։ Դան. 11—38։

տեր, Եւ տեսնել էլ չէ կարող1)։ Ամէն,2) Ալէլուիա Ամէն։ Գ. Ե. 3—14։

Ես եմ խաչուած Եհովայի համար մարտնչողը կամ՝ բոլոր 666 դժոխային Քրիստոնէութիւնների3) եւ Սատանայական Յուդայականութեան Աւերիչը:

Սուրբ մարգարէների եղբայրը եւ Եհովայի հրեշտակների համախոհը, Արքայից–Արքայի Արտիլերիայի Ընդհանուր հրամանատարը, նրա4) Հօր արքայ քահանան, ազգերի եւ յուդայեանների հեթանոսների հետ Միանալու Լոյսը կամ Աւելի կարճ՝

Զարմանալեաց Զարմանալին եւ հրաշալեաց հրաշալին, Երեւեցած այժմ Եհովայի միջոցով այս Մոլորակի վրայ։

1) Որովհետեւ տեսքն արդէն չափազանց միկրոսկօպային է, մինչեւ բիլիոն անգամ փոքր է հիւլէից, նշանակում է Ադամը, Կայէնն ու Աբելը, Աբրահամը, Մովսէսը և Եսային Աստուածատեսներ չէին. և Բաաղամը։

2) 1 Տիմ. 6—16։ Յովհան. 1—18, 1։ Յովհան. 4—12։

3) կամ Սատանայական-Քրիստոնէական պատնէշների,

4) Գ. Ե. 1—6։ 22—9։



## ՁԱՅՆ

Աստուածային այս համաշխարհային Աւետաբերի իւրաքանչիւրին, 666 Դժոխային Քրիստոնէութիւններից ԵՀՈՎԱՅԻ գլխաւոր հակառակորդին, այսինքն՝ Պապին, պատրիարքներին, կաթողիկոսներին, էկզարխներին, Կարդինալներին, Սուպէրինտենդեններին, կառավարչական սինոդներին1) հերետիկոսական եւ հերձուածողական միտրոպոլիտներին, մօրմօնեան Բազմակին մարգարէին, եւ ուերչիննեան, բազմահարճ հրեշտակին2) կամ ընդհանրապէս իւրաքանչիւր քրիստոնէական խաւարի ամենակալին։

Պետրոս3) առաքեալի իշխանութեամբ4) Ամենաերանեալ5) ախրապետող, „տանել արքա-

1) Սողոման թագաւորի կարծիքով. Ժողովուրդ կառավարողի Սիրտն Աստուածային ձեռքի մէջ է, Իսկ սինոդները սիրտ չունեն, Յուդա են, ինչպէս չը մըտածող, այլ միայն ժողովրդին խորամանկող, սպանեցին՝ բոլոր Եհովայից Ուղարկուածներին, որոնք չը ճանաչեցին Սաւուղական, Աքաաբական, Հերովդիական և Սողոմոնեան Սրտերը Եհովայի կամ մարգարէների Աստծու ձեռքում։

2) Այս հրեշտակը Պետերբուրգումն է, Կիրօչնի փող. № 4։

3) Մատ. 16—19, 18։ Յովհան. 21—15...17։

4) Եւ պապամանգա-գլխարկային Կրքով։

5) Բայց ոչ ամենասուրբը, որովհետև ամենասուրբը միայն Եհովան է։

ցութիւն՝ 1) Անառակներին, Փայտապաշտներին, Շնացողներին, Պղծողներին, 2) Մարմնաշարժներին, 3) Արուագէտներին, Զայրացնողներին, 4) գաձողներին, վաշխառուներին, ընկճողներին կամ կալուածատէրերին, հարբեցողներին, ծխողներին և բոլոր ստութիւն 5) սիրողներին և կատարողներին՝ և տանել Դժոխք 6) ձեր հաւատի 7) բոլոր հակառակորդներին. „և ամենաանխախական 8) սիւն և հաստատութիւն Եօթնգլխեան-տասնեղջիւրեան-Թնդանօթային և մորակամարտ գազանութեան, մեղսակիր քաւութեան (հնոցի մէջ), քարքարոսութեան, տմարդութեան կամ հաւատարմնութեան և սարկացման կամ աւելի կարճ՝

1) Ամենա-Անյատակ Երկիրը։

2) Ես. 65—4։

3) Սիֆիլիտիկներին կամ ֆրանսիացածներին։

4) Մատ. 5—22։

5) Կամ հակառակ ասացածին 1 Կոր. մէջ. 6—9...11։ Գաղ. 5—9...21։ 1 Յովհան. 3—10, 15, 16։ 2—9...11։ Մատ. 5—22։ 23—7...10։ Գ. Ե. 21—8։ 22—15։ 20—15։ Ես. 66—17...24։

6) Հաւանօրէն այն վհի մէջ, որի մէջ գլորւեց Կափառնաում քաղաքը։ Մատ. 11—23։

7) Կամ ձեր Մայրիկին և նրա Աղջիկներին։ Գ. Ե. 17—2...5, 6, 18—3. 23, 24։ 19—2։ 2—21, 24։

8) Կամ հակառակ ասած է Գաղատացիներին. 2—11...14։



իմ Աստուած Ենովայի Կատաղի հակառակորդ։

Հաւանօրէն ձեզ յայտնի է, կամ լսել էք, որ Իւրաքանչիւր առանձին հաւատի ոչ թէ սեմինարիական Գերիմաստութիւնը, այլ Համալսարանական կամ Համբատմարդկային գերիմաստութիւնը, պահանջում է և Համբատմարդկային Կրօն։ Իսկ որովհետև այդպիսի Կրօն դեռ չը կայ Յայտնապէս այս մոլորակի վրայ, հետևապէս համալսարանական գիտութիւնների դասընթացը Իւրաքանչիւր աւարտող ստիպուած է ճանաչել մատերիալիզմը որպէս համաշխարհային, Աստուածաբանական ճշմարտութիւն։ Եւ դուրս է գալիս, որ Մարդիկ առանց որևէ լուսաւորութեան կամ միայն Սեմինարիական գրագիտութեամբ, և մասնաւոր կամ խառնարար Կրօններից (իսկ մանաւանդ Եօթգլխանիութեան և Թալմուդական Մըտայլադևութեան Թոյնով Վարակւած) կերպարանափոխւում են Անոնյի, Երկոտանի Գազանների։ 1) Իսկ համալսարանական Լուսաւորութեամբ, բայց առանց ընդհանուր Կրօնի—Գեղեցկազարդ դեւերի։ Հետևապէս թէ նրանք և թէ միւսները չեն գտնում Անմահ, այլ չքանում են և կը չքանան Գոյութիւնից, ինչպէս որ բոլոր գազաններ-

1) Հրէշաւոր խօսող Գօրիլլաների կամ փայտահրաշագործ քահանաների, հերձւածողների և ջհուդների։

րը ու դևերը։

Այժմ իսկ բոլոր անմահ մարդկանց նախայաւիտ անման պարապուխը יהוה բարեհաճեց բանալ Ինձնով այն, այնքան-երկար-որոնւող Ընդհանուր Կրօնը կամ Հաւատի Միութիւնը բոլոր մարդկանց, գիտնականների և ագէտների, Ոգևորականների և Որովայնականների համար։

Իսկ որովհետև այս գրկոյքից էլ դուք տեսնում էք, որ այս կենարար լոյսը վառեց Ինձնով Եհովան այնպէս պայծառ, որ ոչ մի խաւար չի հանգցնի Նրան, ուրեմն Ես ենթադրում եմ, որ դուք էլ կը հասուցանէք Նրան հանդիսաւոր շնորհակալութիւն և կը լուսաւորէք այս լոյսը բոլոր Օրէնսգէտներին և ոչ օրէնսգէտներին, խաւարում և Ձեր գայլագաներին1) մէջ եղողներին, ադամանդներով զարդարւած խաչերով հանդերձ Քրիստոսի գովաբանութեամբ։

Բայց եթէ որ Եօթգլխանի, կամ Դժոխային քրիստոնէական խաւարի խորութիւնը ձեր սրտի մէջ այնպէս մեծ է, որ մինչև անգամ Իսրայելի Աստծու և այս համաշխարհային լոյսը չի լուսաւորել Նրան, այլ միայն կը բացվառի Նրա մէջ Ձեր դժոխային Ֆանատիկոսութիւնն այն-

1) Գ. Ե. 13—11...15։ 18—23, 24։ Մատ. 23—27, 28։



պէս, որ դուք, ոչ միայն կը թագցնէք հրէաներից և բոլոր մարդկանցից այս Աստուածային շնորքը, այլ մինչև անգամ կ'ապստամբէք անեղ հաւատաքննութեամբ իմ դէմ և Ողջամտութիւնոց1) այս Աստուածային լուսով բոլոր Յարուցեալների դէմ, այն ժամանակ այդ դէպքում ես խորհուրդ եմ տալիս Ձեզ, հնազանդւել ձեր Տիեզերական, Ամենահիանալի, Բազմաթնդանօթային, Բազմաղօղանջ, Բազմապետ և Ադամանդագլխարկային Մայրիկին,2) կամ Տիեզերական Պատնէշաստեղծին և բոլոր թագաւորութիւններից—ոսկեհանին,3) անձնուրաց հաւատարմութեամբ և յրացնել նրա (կամ ողամարդու) չարագործութիւններին4) կամ Դժոխային-Քրիստոնէական Բարբարոսութեան և Սնահաւատութեան Զափը նոյն իսկ մինչև հրէական Արմակեդոնը, համաձայն Եհովայի միջոցով ասացւածի՝ „ըսպանող, էլի սպանիր։“ Գ. Ե. 22—11։

Բայց ինչպէս չի կարող լինել, որ Եհովան

1) Դ. Ե. 3—1, 18։ Մատ. 8—22 1 Տիմ. 5—6։ Ես. 43—8։ 48—4։ 29—14։

2) Կամ Քրիստոնէական Իզաբէլին։ Գ. Ե. 2 20 17—4, 5։ 18 3, 23, 24։ 19—2։

3) Կամ Ռօդշիլդի նմանութեամբ։

4) Այսինքն՝ Եհովայից բոլոր ուղարկւածների սպանութիւնը։

չը հարուածի այժմ հակառակորդին Մինչև ան-
գամ և Նրա այնպիսի Համաշխարհային Ճշմար-
տութեան, որը ոչ ոք աշխարհում հերքել անկա-
րող է, հետևապէս ես իմ մարդասիրութիւնից
դրդուած՝ խորհուրդ եմ տալիս ձեզ դարձնել ձեր
ուշադրութիւնն այստեղի XIII և XIV յօդ-
վածի և Նախազգուշացման վրայ ազգերին „լոյս“
գրքի մէջ? և աչքաթող չանել և այն, թէ որով-
հետև Եհովան Ուղարկել է ինձ աւերելու բոլոր
սատանայական ցանկապատերը մարդկութեան
մէջ, հետևապէս այս պատճառով ինձ պէտք է
դառնեն ոչ միայն Դուք, այլ բոլոր աստուածնե-
րը և բոլոր Ազգերի ու Հաւատների Աշխարհի
տիրուհիները։

ԶԱՅՆ

Մօնտէֆիօրներին.1)

Իսկ յանձինս նրանց եւ բոլոր մանղարիններին
եւ ոստիկաններին։

Ամենից գովուած Sirs Montefiores կամ ա-
մենահարուստ ազնուականներ Եհովայից դէպի Մօ-
ավի ընկած Յուդայեաններին մէջ։ Որովհետև
Ոչինչ համեմատելի չէ Անմահութեան հետ, թէ-
կուզ մէկն ամբողջ Աշխարհն ունենար, Զարդէր
բոլորին պատերազմների մէջ անպարտելի կեր-

1) Հօրը և որդուն



պով, Եւ ոսկու սարե- [illegible] դիզէր, ապրէր հազար
տարի պալատն[illegible]րում այգիներով հանդերձ, հա-
ւաքելով [illegible]տրութեան մէջ խեղճերին, ծեծեր
Աստուածային մանուկներին1) մտրակներով Եւ
ոսկու մէջ փտէր յաւիտեանս յաւիտենից։ Այն
ժամանակ կասկած չկայ, որ և Դուք կը լսէք Ե-
հովայի Այս Զայնը, որ կանչում է բոլոր մարդ-
կանց դէպի Անմահութիւն, Նոր-Իսրայելական
կամ Հանրամարդկային Կրօնի մէջ՝ շղթայելու
նրանց դժոխային զէնքը երկրագործական գոր-
ծիքների2) վրայ և վերականգնելու ամեն տեղ
Խաղաղութիւն, Ազատութիւն, Ուրախութիւն (այ-
սինքն՝ Երաժշտութիւն) և Բարօրութիւն 1000
տարով. և հետևապէս դուք կը թողնէք ձեր բա-
րեկամութիւնը մահկանացու Աշխարհի հետ (և
տառանձնապէս, կը հեռանաք Սատանայական ժո-
ղովից,3) ինչպէս Խոլերայից) և կը դառնաք բա-
րեկամներ Նախայաւէտ անմահ Հրէայ Եհովա-
յին4) և Նրա բոլոր բարեկամներին և անձնէր ե-

1) Գ. Ե. 14 1։ 5 Մ. 4—1։ Ես. 1—2։ Գաղ. 3
26, 28։ Յովհան. 1—12, 13։

2) Կամ ըստ սուրբ աւետեան՝ արօրների վրայ։ Ես. 2
—4։ Միք. 4—3։

3) Գ. Ե. 2—9։ 3—9։ Եզ. 2—3..8.

4) Որ և է Աստուածների Աստուածը. 5 Մ. 10—17։
Սաղ. $^{86}_{85}$—8։ $^{82}_{81}$—1։ $^{136}_{135}$—2։

ռանդով կը սկսէք կատարել Ամենը՝ ինչ որ Նա այժմ հրամայում է կատարել իր բարեկամներին, այսինքն՝ գիշեր-ցերեկ զբաղւել արդէն ոչ թէ Գէշէֆտներով,1) ոչ թէ հաշւելով և պահելով Ձեր ոսկին2) և ոչ թէ փնթփնթալով սինագօգաներում 3500-ամեայ Թալմուդական յիմարութիւններ, Եհովայի3) ատելի, այլ միայն տարածելով, արևելքից մինչև արևմուտք, Նրա այս կենարար Աւետումը, որ ուրախալի է արդէն ամբողջ մարդկութեան4) համար:

Օրհնելով ձեզ փրկչական5) անունով יהוה: և իմ Արքայ-Քահանայական Օրհնութեամբ, ինչպէս Նրա և իմ նոր բարեկամների, մնում եմ լիովին հաւատացած, որ իմ տոհմական միութիւնը Եհովայի6) մասին ձեզ հետ կը լինի անխախտ ողջ անվերջ յաւիտենականութեամբ և որ ես կը ստանամ ձեզնից, ինձ և Եհովայի բոլոր հրեշտակնե-

1) Որսերով

2) Եւ ոչ թէ զինւորախաղերով և արիւնհեղութեամբ:

3) Ես. 1—13...15: 29—13:

4) Մաղ. 1—11: Ես. 41—25: 42—1...6: 46—11: Գ. Ե. 14—6 և II—Հ..

5) Յովէլ. 3—5 (2—32):

6) Յովհան 1—12, 13: Գաղ. 3—26, 28: Յակ. 2—9: Կող. 3—11: Գ. Ե. 1—6: 3—21:



րի համար Ուրախալի, պատասխաններ, և Գոչելով՝ «Ուռա՞ Ովսաննա՞ և Վիվա՞տ»1) Նախայաւէտ Հրէայ Եհովային, երկրի վրայ Արագընթացման եկողին և իր բարեկամներին Անմահ դարձընողին: Ամէն, Ալէլուիա Ամէն:

## Ա Ն Թ Ա Ռ Ա Մ

կամ

Եհովայի Ամենանշանաւոր հրամանը Նրա Հաւատարիմ Բարեկամներին և Բարեկամուհիներին Սատանայի դէմ ունեցած այժմեան վերջին կըռւում:

Հեռանալ, ինչպէս Խօլերայից՝ 1. բոլոր 666 Քրիստոնէական հաւատներից, 2. ամեն տեսակ Յուդայութիւնից, և 3. այն Սրբազան գրւածքից որը սովորեցնում է աստւածքին հակառակ: Մաղ. 1—11: Ես 41—25: 42—1... 6: 46 11: 56—7: Մար. 11—17: Գ. Ե. 11—1, 2: 15—4: կամ աստւածքին II և IV Հ. Սիւրմայի մէջ, այսինքն՝ որը չի հրամայում Երկրպագել, Խնկարկել և մաքուր զոհեր բերել միայն יהוה: Անւան տաճար կամ որը կոչւում է մարդկանց ոչ թէ դէպի հանրամարդկային Հաւատ առ Խաչեցեալ Աստուած Եհովան և ոչ դէպի Նրա Ընդհանուր Աղօթքի Տաճարը Նոր Սիօնի սարի վրայ, Այլ դէ-

1) Գ. Ե. 19—3:

պի առանձնակի հաւատ և դէպի ուրիշ սարերի և տեղերի վրայ եղած տաճարները, և ուրիշ անունների տակ. Որովհետև իւրաքանչիւր Սրբազան գրուածք, որ հեռացնում է Խաչւած Յուդա Եհովայից (կամ Յունարէն Յիսուս Քրիստոսից) դէպի այլ Աստւած (թէկուզ մինչև անգամ դէպի որևէ երեքգլխեան և եռադէմ՝ անվերջ համաստեղութիւնների արարչին) և դէպի այլ անուն. և է նա Խաւար, որով Սատանան մոլորեցրեց բոլոր Մարդկանց։ Աստծով, Աստծով ճշմարիտ է և նոյն իսկ վկայ եմ կանչում այս ճշմարտութեան Իրան Եհովային։

Եւ այս պատճառով՝

Ով որ կը հակառակի Եհովայի այս հրամանին, նրան ես դուրս եմ ձգում Իմ անվեհեր-ռազմիկ Գնդից, ինչպէս վախկոտի,1) կամ ինչպէս այն Սատանայական ցանկապատը դեռ խնայողի (այսինքն՝ խռովարար հաւատը), որի մէջ գտնւում են նրա հարազատները,2) կամ ինչպէս ոչ Տաք և ոչ Ցուրտ դէպ Ինձ3) եղողի, կամ ինչպէս ինձ հետ մի հոգի և մի սիրտ չեղողի և Ե-

1) Գ. Ե. 21—8։

2) Ղուկ. 14—26, 33։ Մատ. 10-37։ 5 Մ. 33—9։

3) Գ. Ե. 3—15, 16։



հովայի և իմ1) բոլոր բարեկամների և բարեկամուհիների հետ։ Ամէն։

Եղբայրներ ի Քրիստոս Յիսուս

Սրբիմաստ Մալականնե՛ր։

Ուղարկում եմ դէպի ձեզ իմ Եհովա Աստծու հրամանը և խնդրում եմ ձեզ կցել նրան այն Ուրմային, որ ես ուղարկեցի ձեզ այս Դեկտեմբերի 6-ից և եթէ ձեզնից մէկը կը լսի Նրա այս Կենարար Ձայնը և կը կամենայ յարել Եհովային, որպէս զի ստանայ Նրանից Անմահութիւն և տալ Նրան խոստում օգնել Նրան ոչնչացնելու բոլոր Սատանայական ցանկապատերը մարդկութեան մէջ, (այսինքն՝ բոլոր Առանձնակի կամ Խռովարար Հաւատները), նրան խնդրում եմ յարել իմ գնդին և կռուել Սատանայի դէմ ինձ հետ Միասին, կատարելու հրամանը-ճակատամարտում կը լինեն միայն նրանք հէնց որ Եհովան կը սկսի հրամայել և հրամայում է իմ միջոցով. և ձեզնից բոլոր այդպիսիներին ես ուղարկում եմ իմ Արքայ-քահանայական Օրհնութիւնը יהוה անունով և հանդերձ գրկախառնութեամբ միասիրտ-եղբայրական համբոյր և խնդրում եմ անյապաղ տեղեկացնել

1) Գործ. 4—32։ Գաղ. 3—28. Յակ. 2—9։ Կող. 6—11...13 . 16։ Գ. Ե. 2—2 ..4։ Մար. 12—31։ Գաղ. 5 14։ 3 Մ. 19 18։

ինձ, ումով ներգործեց ձեր սրտերի վրայ այս Զարմանալի Համաշխարհային Աստուածային Աւետումը։

Հասցէագրել դէպ ինձ այսպէս Պէրմ քաղաքի միջով Նիժնետագիլսկ Վաճառական Գրիգոր Դաւիթովիչ Վօլգինին․ (այստեղ յիշուած Հասցէն ներկայումս անվաւեր է։

Թող իջնի բոլորի վրայ գերիմաստութեան Սուրբ Ոգին Աստուածային այս մեծ գործն ըմբռնելու համար Սատանայով մռայլուած այս աշխարհում Ամէն.

Հ. Հ.

Գրքոյկի հրատարակութեան սկիզբը․ 1884 Թ․ Դեկտեմբեր 16-ին։

Միտավայում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0158754